

ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ ԵՎ ՍՔԱՆՁԵԼԻ

«Գրիգորյան երգեցողությունը, որը կաթոլիկ ժամերգության և դրանով հանդերձ հիշյալ ժամանակի եվրոպական մասնագիտացված երաժշտության հիմքն է, գոյացել է հայկական հոգևոր երաժշտության (Պատարագի) ուղղակի ազդեցությամբ» (Առվեստայա մուզիկա, թիվ 10, 1971): Պրոֆեսոր Վ. Կոնենի այս պնդումը պաշտպանում են նաև Տ. Լիվանովան, Գ. Խուրովը և ուրիշներ: Հայկական միաձայն երգեցողության (մոնոդիա) սերմերը, տունկերը եվրոպական հողի վրա յուրովի ծլարձակեցին, ճյուղավորվեցին և վերածվեցին բարձրուղե ծառերի. հիշեմք Պալեստրինայի, Ալեգրիի, Թ. դե Վիկտորիայի և այլոց խմբերգերը: Եվրոպական երաժշտական մտածողությունը հիմնված է այնպիսի համաձայնությունների (լադ) վրա, որոնց ութերորդ աստիճանը նույն առաջինի կրկնությունն է: Դա հնարավորություն է տալիս ռազմահարկ հնչյունային կառույցների: Դրանց հնչյուններն ասես աղյուսներ են, որոնք համաչափ դասավորվում են, շրջվում, միմյանց փոխարինում տարրեր հաթախներում, միաժամանակ հնչում, մի հանգամանք, որ հնարավոր դարձրեց Բախի կոթողների ստեղծումը: Հայկական լադերի հնչյունները նման են գետի ֆաբրի, տարբեր չափերի ու ձևերի ժայռաքերտերի, որոնք ունեն սուր անկյուններ, և շարելիս՝ օդի, լույսի անցքեր են մնում: Գեթմանական խորալի հիմնական մեղեդիների շարադրանքն այնպիսին է, որ ենթադրում է «պակասող» ձայների գուգահեռ գոյությունը, և շինանյութը բաշխվում է հիմնականում չորս ձայների միջև: Եվ երբեմն չորս պարզունակ, ադֆատիկ ձայները միանալիս, լիարժեք հորինվածք են փնջում: Նման մտածողությանը ավելի բնորոշ է սիմետրիան: Հայկական միաձայնությունը (մոնոդիա) ինքնաբերական է, ասելիքը ամփոփված է հենց մեղեդիի մեջ: Հայկական ռազմաձայնության հիմնադիրները, անշուշտ, օգտվել են եվրոպականի նվաճումներից: Այնպես, որ եթե լույսը ծագում է արևելքից, ապա անդրադառնում է արևմուտքից: Հայկական ռազմաձայնության կատարելատիպը կարելի է համարել Կոմիտասի «Խորհուրդ խորին» շարականը: Եվ այդ լույսի շողերից է Մովսես Խորենացու «Խորհուրդ մեծ և սփռվելի» շարականը: Մեծ ֆերթոդառաջը 5-րդ դարի շարականագիրներից է: Նա ստեղծել է Մենդյան, Տյառնընդառաջի, Աստվածածնի Վերափոխման և այլ տոների ավելի քան հարյուր շարականներ: «Խորհուրդ մեծ» օրհնությունով է բացվում Աստվածածնի Մենդյան և Ավետյաց, Քրիստոսի Մենդյան տոների շարականները: Եկեղեցու հայրերից մեկն ասում էր, թե Տերը երաժշտության միջոցով Ավետարանն է փարգում: Հիրավի, հիշյալ շարականում, Մենդյան պատկերից բացի, ակնարկվում են Ավետումը, Մարիամի ուրախությունը, Մկրտությունը Հորդանանում, աղավանկերպ Սուրբ Հոգին, Հովհաննես Մկրտչի գլխատումը և այլ դրվագներ:

ԱՎԵՏԻՍ
ԽՈՐԱՌԻՐՆ ՄԵՐ

ՄՊՎԱՆԵՍ ԽՈՐՈՇՆԱՅԻ
Մշակումը՝ Դամիր Ներսիսյան

Ծաղիկաբուր Դև

S *mf* Խոր - փուրջ մեծ հ - սրամ շ - լի

A *mf* Մեծ - և սրամ շ - լի

T *mf* Մեծ և սրամ շ - լի

B *mf* Մեծ և սրամ շ - լի

mf Խոր փուրջ մեծ հ - սրամ շ - լի

mf Խոր փուրջ մեծ հ - սրամ շ - լի

mf Խոր փուրջ մեծ հ - սրամ շ - լի

mf Խոր փուրջ մեծ հ - սրամ շ - լի

Մեր հայրենիք, հոյս զիս, հայրենիք, հայրենիք, հայրենիք, հայրենիք, հայրենիք, հայրենիք, հայրենիք, հայրենիք

10
 հրհր - - - մի - - - ցաւ - - - հոփի- - - քըմ - - - հ - - - ր - - - զհ - - - մ ր - - - մո
 10
 հրհ - - - արա - - - իս - - - րամ - - - ա
 10
 հրհ - - - 2 - - - արա - - - իս - - - րամ - - - ա - - -
 10
 հրհ - - - 2 - - - արա - - - իս - - - րամ - - - ա
 10
 հրհ - - - 2 - - - արա - - - իս - - - րամ - - - ա

Մեր հայրենիք
 Երկիրս հայրենի
 Երկիրս հայրենի
 Երկիրս հայրենի
 Երկիրս հայրենի

25

o - ph - ան

3 3 3 3

դե - - - - - ք.

կան օրհ - ան

սի - - - - - ք.

25

25

25

25

28

դի վա - - - - - սը - - - - - մե ք

մա - - - - - րո՛ւնա

28

դի վա - - - - - սը-ն մեք

հարձ

28

դի վա - - - - - մեք

հարձ

28

դի վա - - - - - սըն մեք

մարմ - - - - - նա

31 *f* *նա* *ցաւ*

31 *f* *նա* *ցաւ*

31 *f* *նա* *ցաւ*

31 *f* *նա* *ցաւ*

MAESTOSO

33 *f* *նա* *ցաւ*

33 *նա* *ցաւ*

33 *նա* *ցաւ*

33 *նա* *ցաւ*

33 *նա* *ցաւ*

Նրիս - րոս ծը - նաւ

իւ խոր - նի - ցաւ:

Այս շարականի՝ Ն. Թահմիզյանի խորաթափանց վերլուծությունը բացահայտում է մի շարք օրինաչափություններ: 4-3+4-3 կառուցվածքով երկու տողերը կազմում են մեկ տուն: Կոչական, առնական մեղեդին (ԴԿ) համապատասխանաբար բաղկացած է երկու նախադասություններից, որոնցում 2-րդ և 4-րդ դասույթների նմանությունը հակադրվում է 1-ին և 3-րդ դասույթների տարբերությանը: Շեշտված ու անշեշտ վանկերի խաղը, միևնույն հնչյունի տարբեր նշանակությունը (1-ին նախադասության վերջում իբրև «հարց», իսկ վերջնահանգսնում՝ իբրև «հաստատում») այս ամենը ստեղծում են սիմետրիայի և հակասիմետրիայի բախում, որը և հնչուծի (դիսմոխիայի) աղբյուր է հանդիսանում: Նման վերլուծությունը օգնում է ըմբռնել շարականը ոչ միայն սրտիվ, այլև բանիվ: Ըստ Թահմիզյանի, Ծննդյան Ա օրվա կանոնի օրհնության առաջին պատկերը նոր հիմք ստեղծեց հայ շարականերգության հետագա զարգացման համար: Բացի այդ, հիշյալ շարականը կյանքի կոչեց նաև ժողովրդական բազմաթիվ ավետիսներ:

Այսօր էլ Խորենացու շարականը շարունակում է անցվազ ուժով հուզել, հուսադրել, նորանոր արձագանքներ արթնացնել, որի վկայություններին է Ծննդյան Տոնի նախօրեին «Հոգևոր երգի» երգչախմբի գեղարվեստական ղեկավար Միհրան Ղազելյանի պատվերը՝ բազմաձայնել շարականը ֆառաձայն երգչախմբի համար: Ի՞նչ կա ավելի բերկրալի, ֆան հրեշտակային երգով դիմավորել Գլխական այս Տոնը:

Սուրբ Ծննդյան տոնի շմին, բանաստեղծ Խնտի խոսքով ասած, լսում ես, թե ինչպես է ծաղկում սիրող, սիրտ, որ պապակ հողի պես նաճֆած էր, որ, մեղքից ծանրացած, փափագում էր իր կենդանի Փրկչին, որպեսզի նորոգված վերստին կյանքի կոչվի, այս անգամ հավիտենական...

Նորածին Փրկչին փառաբանելու համար հրեշտակների բազմությունը իջավ երկիր, հովիվքն էլ միացան նրանց: Զգիտեմ, ինչպես էին հրգում նրանք, սակայն Մովսես Խորենացու «Խորհուրդ մեծ և սփանչելի» շարականը թվում է, հրեշտակային երգերի արձագանքն է, որ նույնպես ավետում է Սուրբ Ծնունդը...

Ահա ա՛յդ Գլխական պառնին ինձ առաջարկվեց բազմաձայնել հիշյալ երգը ֆառաձայն երգչախմբի համար: Ի՞նչ կա ավելի բերկրալի, ֆան երգակցելը Խորենացուն, Նդեմը ռոդող գետի պես շարականին գումարել սրտիցդ թխող երեմ վտակ, երեմ ձայն, շուշաններ սփռել «Շարականի գետին մօտ» (Թեֆեյան), վեր հանել մեղեդու ծալքերում «Քաֆնուած մանանան» և բաշխել մյուս ձայներին, բացահայտել Խորենացու աստղաշար մեղեդու անսեսանելի արքայական ձայները: Դասական բազմաձայն երաժշտությունը (Պալեստինա, Բախ, Կոմիտաս) ներդաշնակության կատարելատիպն է, ֆանգի փնջված է սրտի օրհնով, չէ՞ որ մեր գլխավերևում աստղերի կարգն է, իսկ սրտում՝ օրհնեք (է. Կանո): Եվ մարդիկ, որպես Քրիստոսի մարմնի անդամներ, աստղերի ու հնչյունների պես պիտի ներդաշնակվեն ու կազմեն մեկ ամբողջական եկեղեցի՝ Աստվածային «բազմաձայն ստեղծագործություն»:

Խորենացու շարականի բազմաձայն մշակումը մի մանրակերտ է, որն արտացոլում է մեծակերտը: Ինչպես ջրի մեկ կաթիլի մեջ արտացոլվում է, «սեղավորվում» ռոջ արևը, այնպես էլ հիշյալ շարականում արտացոլվում է Արեգակն արդարության՝ Հիսուս Քրիստոս: Նթե նարարապետությունը ֆարացած երաժշտություն է, ապա երաժշտությունն էլ շնչող, ծավալվող, արթնացած

ճարտարագետություն է: Խորհնացու շարականում վերևի ձայնը (սոպրանո) կարծես երկնքից ազդարարում է Բեթղեհեմյան Աստղի մասին, մյուս ձայները երկրից արձագանքում են՝ միաձուլյալ համահնչյուններով: Այիզբը տաճարի սյունազարդ մուտքի է նմանվում, սյունազարդ է նաև շարականին կցված «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» վերջաբանը, ուր բամբ ձայնի վերընթաց քայլը ինչ-որ տեղ կարող է հիշեցնել Հակոբի տեսիլքի երկնասլաց աստիճանը: Շարականի մնացյալ մասը ծիածանվելով՝ կամարակապում է սյուները: Այսպիսով, ամբողջ կոթողը, որ ուրվագծով հիշեցնում է Սուրբ Գայանե սիմեոնիկ եկեղեցին, կարծես մի հնչյունաշեն տաճար է՝ վեր խոյացած Բեթղեհեմի անպաճույճ մետրի ու այրի դիմաց, ի փառս նորածին Փրկչի: Այսպիսին էր Խորհնացու շարականը, որ ընկալեցի «Հռոմեոս երգի» հրգչախմբի կատարմամբ, որին և նրա գեղարվեստական ղեկավարին հրախտադարտ մնացի... Օրհնյալ է Հայտնությունը Քրիստոսի...